

Հ Ն Չ Ա Կ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Ա Ջ Ա Տ Ջ Է Յ Թ Ո Ւ Ն

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ճ Գ Ն Ա Փ Ա Մ Ը ԵՒ Ե Ի Ր Օ Պ Ա Ն .

Այս շարաթ չհաստատարակված անգլիական Blue Book-ի մէջ լոյս առնաւ Սասունի գէղաքերի առիթով եւրօպական երէք տէրութիւնների կազմած յայտնի Մասնախմբի Զեկուցագիրը: Վրաս մէջ նկարագրելով իր քննութիւնները, Մասնախումբը գալիս է այն եզրակացութեան, որ եթէ նոյն խիչ հայերի կողմից եղել են առիթներ զբոսելու թիւրք կառավարութեան, այդ առիթները սակայն խիստ աննշան ու թեթեւ են համեմատաբար այն պատժին, որ գործադրեց օսմանեան կառավարութիւնը հայերի վրայ: Այդպիսով, ուրեմն, Մասնախմբի կողմից հաստատուում են կոտորածները, որոնց համար պատասխանատու է նա նկատում թիւրք կառավարութեանը: Այդ կէտից յետոյ Մասնախմբի մէկ ուրիշ եզրակացութիւնն այն է, թէ 10 հազար կամ 6 հազար թիւրք, որ արվեցաւ իբրև գումար Սասունի կոտորածների, շատ չափազանցած է: Մասնախումբը տալիս է 900 թիւրք: Այդ բանի վրայ եւրօպական բազմաթիւ թերթեր, գլխաւորապէս գերմանական, սկսան պօռալ, թէ այդպէս են միշտ հայերի գործերը, միշտ չափազանցած, միշտ ուռեցրած, և թէ ահա 10 հազարը, 6 հազարն այսօր հազարի խիչ չէ համարում: Մեզ, վայրենի ասիացիներին, քսաննեղի է տեսնել, ինչպէս այդ քաղաքակիրթ եւրօպացի չհաստատարակողները կարող են այդ աստիճան ստորանալ: Մի ժողովուրդ, որ շարունակ հալածված, ջարդված ու կոտորված է սուլթանի կառավարութեան ձեռքով, որ այսօր դանկում է ամենուրեքին թշուառութեան մէջ, խաբված եւրօպական տէրութիւնների կողմից, — այդ ժողովուրդը ասկաւին դատնում է ամեն յանդիմանութիւնների, վիրաւորանքների, անարդար գատապարտութեան ասարկայ եւրօպական մարդասէր կոչված մամուլի ներկայացուցիչների կողմից: Նրա հետ դեռ վիճում և առևտուր են անում իր տված դիակների թիւ նկատմամբ: Աչինչ չը կայ այնքան ծանր ու տանջող, որքան լինել ուրիշի դատաւորը, և սակայն դա մի գեր է, որ գործ են գնում և ի չարն են գործ գնում ա-

մեն-մի քայլափոխում: Մարդկային կեանքը սուրբ է, լինի այն հայ, լինի գերմանացի, լինի անգլիացի: Այլ կրք մարդկային կեանքեր խողտողված են անիրաւ կերպով, այլ ևս անտեղի է վէճ հանել նրանց դիակների թիւի վրայ. մարդկային կեանքերի կորուստն արդէն կայ, անիրաւութիւնն էլ կայ: Այն բանի շնորհով, որ 6 հազարն իջնում է մինչև հազարի, Սասունի կոտորածների նշանակութիւնն ամենեւին չէ կորցնում իր առաջին ծանրակշուութիւնը և թիւրք կառավարութեան պատասխանատուութիւնն էլ ոչնչով չէ պակասում: Այդ հազար կոտորածներն անմեղ զոհեր են թիւրքական վանդալականութեան: Այդ հազար կոտորածների համար էլ իրանց կողմից պատասխանատու են եւրօպական վեց մեծ պետութիւնները, որոնք, ահա 18 տարի կայ, միջազգայնապէս ու պաշտօնապէս յանձն են առել երաշխաւոր լինել հայերի կեանքի ապահովութեան:

Իայց ի՞նչ պէտք է այ խօսք անելու Սասունի ջարդերի մասին: Այս վերջին մի քանի ամսւայ ընթացքում կոտորված հայերի թիւը հաշվում է տասնեակ ու տասնեակ հազարներով, և այդ բոլոր սարսափելի մարդկային հէկատոմիներից յետոյ, քսաննորդ դարու նախընթաց օրը եւրօպական տէրութիւնները չը համարձակվեցան մտածել և մտածել լքութեամբ չուզեցին սուլթան բարբարոսի հրէշաւոր կրքերը զսպել, այդ բարբարոսի, որ նրանք անուանում են «Հիւանդ Մարդ» կամ «Փառող դիակ»... Ի՞նչ դասն հեղնութիւն:

Իողորմին նորերս արասանած մի ճառում Վոլգերրի յոյս է յայտնում, որ եթէ սուլթանը մի առժամանակ հանգիստ մնայ, նա թերևս գործադրէ իր խոստացած բարեկորուցումները: Վոլգերրիի այդ ճառն արդէն Անգլիայի խոյսառակ նահաջն է հայիական դատից և նրա յայտնած այդ տարօրինակ յոյսը մի փուչ ու խուսափոխական խօսք է, որ բացարձակ խոստովանութիւն է իր՝ Վոլգերրիի քաղաքականութեան կրած պարտութեան Արևելքում, ուր հայիական հարցը լուծելու համար նրա առջև ելան ծանր դժուարութիւններ, սրանց մի մեծ մասը ստեղծված լինելով նոյն կակ իր, այդ սղնաւական մարկիլի, քաղաքականութեամբ:

Եւ, ի հարկէ, եւրօպական դիպլոմատիան մը-տադիր է ոչինչ չանել այժմ էլ Օ.է.թ.ունի խրնդ-րի մէջ: Եւրօպական պետութիւնների հիւպատոս-ներն այժմ Օ.է.թ.ուն են, ուր բանակցում են ա-պրատամբների հետ: Ի՞նչ դիրք կը բռնեն նրանք: Խորհուրդ կը տան նրանք միթէ Օ.է.թ.ունցիներին իրանց գէնքերը յանձնել թիւրք կառավարութեան, որ ահա չորս ամսայ ընթացքում շարունակ ա-մենաողորմելի պարտութիւններ է կրում Հնչակ-եան բանակների հարուածներից: Բայց այդ խոր-հուրդն ուրիշ ոչինչ չէ նշանակում, եթէ ոչ Օ.է.թ-ունցիներին և նրանց մօտ ապաստանած 20-30 հազարի հասնող հայերին, որոնք փախած են կառ-րածներից, յանձնել թիւրք կառավարութեան վը-րէժխնդրութեան ու կատաղութեան: Ար պահան-ջե՞ն միթէ այդ հիւպատոսները Օ.է.թ.ունցիներից յանձնել իրանց պարագլուխներին: Եյդ կը լինի անարգարութեան կատարեալը, որ կարող է յու-զել ապստամբներին և ստիպել նրանց կարճ կը-արել ամեն բանակցութիւններ, բանալով մէկ ա-ւելի արիւնահեղ շրջան Օ.է.թ.ունի ապստամբու-թեան մէջ: Ար հրաւիրե՞ն նրանք միթէ Օ.է.թ-ունցիներին ճանաչել երկրում գոյութիւն ունե-ցող օրէնքները, սուլթանական կառավարութեան գերիշխանութիւնը: Մի խօսքով, կը ջանա՞ն մի-թէ նորից ամեն բան դնել իր նախկին տեղը, ինչ-պէս էր ապստամբութիւնից առաջ, և հէնց որ-տեղից էլ իսկապէս սկիզբ առաւ այդ ապստամբու-թիւնը:

Եյդպիսի մի միջամտութիւն Եւրօպայի կող-մից, ուխտադրուժ լինելով հանդերձ, կառաջացնէ այնպիսի ծանր բարդութիւններ, որոնք անմիջապէս երևան կը գան, երբ Օ.է.թ.ունցիների կողմից պա-տասխանը լինի մերժողական, քանի որ այլ կերպ արդէն չէ կարող և չի՞ պիտի լինի: Եւրօպական միջամտութիւնը պէտք է ունենայ մի բնութիւն պա-կաս անդուժ, պակաս սոսկալի իր հեռանքներով և աւելի արդար, աւելի անաչառ, աւելի քաղ-քաղէտ: Եյդ միջամտութիւնը պարտաւոր է ուղ-ղել այն բոլոր սխախներն ու թերութիւնները, որ արեց եւրօպական դիպլոմատիան հայկական այս ահուկ ճգնաժամի ամբողջ ընթացքում: Եւրօ-պան չէ կարող հերքել Հայերի և մասնաւորա-պէս Օ.է.թ.ունցիների ինքնապաշտպանութեան ի-րաւունքը, քանի որ այդ ինքնապաշտպանութիւնը մի սրբազան օրէնք է ճանաչված բոլոր ազգերի հա-մար Եւրօպայում: Ղանաչելով այդ իրաւունքը, եւրօպական դիպլոմատիան չէ կարող պահանջել Օ.է.թ.ունցիների պարզ ու անպայման անձնատուր լինելը: Նա պէտք է ընդունէ, որ Օ.է.թ.ունցիներն իրանց իրաւունքը գործադրած կը լինեն, երբ պա-հանջեն անհրաժեշտ ու արմատական բարենորո-գումներ ամբողջ Հայկական Արևիկայի համար,

բարենորոգումներ, որոնք տալով հայերին ինքնա-վար քաղաքական իրաւունքներ, երաշխաւորու-թիւն կը լինեն հայերի կեանքի ու գոյքի ապահո-վութեան, հայերի վերականգնման ու վարդաջման: Եթէ այդ իրաւացի ու չափաւոր պահանջնե-րին բաւարարութիւն չը տրվէ, Հնչակեան Կու-սակցութիւնն ու Օ.է.թ.ունը և գրանց հետ ամ-բողջ հայութիւնը կը լինեն միևնոյն ստիպողակա-նութեան տակ, որքան էլ դա սոսկալի լինի, դար-ձեալ բարձր պահելու իրանց ինքնապաշտպանու-թեան, իրանց յեղափոխական նշանաբանը, և այդ պարագայում այդ ընթացքի հեռանքները որքան էլ անկարելի լինի գուշակել ու կռուել այժմից, բայց պարզ է, որ կը լինեն ճակատագրական մի և կամ միւս կողմի համար: Սակայն այդ ապա-զան մեզ այլ ևս չէ սարսափեցնում: Խրված մեր արեան մէջ, հրդեհված, կողոպտված ու ա-ւերված մեր ամբողջ ազգային գոյքն ու հարքս-տութիւնը, կորցրած լինելով թէ ջարդերից, թէ թշուստութիւնից, թէ ցրտերից ու սովից հարկւր հաղարաւոր ազգային կեանքեր, մենք ուրիշ ոչինչ չունենք կորցնելու մի նոր օրհասական աղէտից: Եւ սակայն ընդհակառակը, ինչ որ մենք վաստա-կենք, կը լինի մեր օգտին:

ՆՊԱՍՏ ԶԷՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ.

ՉՈՐՐՈՐԴ ՅՈՒՅԱԿ.

ԱՄԵՐԻԿԱ. — Մ օ լ զ օ ն քաղաքի Հնչակեան Մասնաճիւղից 345 ռուբլ 45 սէնտ: Այդ գումարի 200 ռուբլը, որ սխալմամբ 1895 շնչակի-ի № 24 Յաւերւածում Կուսակցութեան գանձարանի նաւին էր արժանագրված. պէտք է լինի Զէյթունի նաւին. 345 ռուբլ եւ 45 սէնտը նախանախաճ է հետեւեալներին. — Սուլթա-նի փրկութեան նամար առօթող երկու նոցարք 50 ռուբլ, 5. Կուլու 30 ռ., Մասնաճիւղի գանձարանից 23 ռ., Սիթ. Կ. Թ. 20 ռ. Գ. 8. 8. 16 ռ., Ս. Մ. Գ. 15 ռ. 50 սէնտ. Գէ. Թ. Ս., Մ. Գ. Ժ. եւ Լ. 8. 15-ական ռ., Մ. Ս. Ա. եւ 8. Գ. 11-ական ռ., Գ. Ժ. 10 ռ. 50 սէնտ., Ժին, Գ. Թ. Ս., 8. Մ., Զէլ եւ 8. Գ. 10-ական ռ., Մ. Մ. 6 ռ. 45 սէնտ. 8. Ա. եւ Ս. 3. 6-ական ռ., Մ. Թ. Կ. 5 ռ. 50 սէնտ. Թ. Մ., Կ. Թ. եւ 8. Մ. Գ. 5-ական ռ., Հարազատ 4 ռ., 8. Խ., Հայ մը, Տիկին Մ. եւ 8. Ա. 2-ական ռ., Սր. Մ. եւ Թ. Խ. մի-մի ռ., եւ 50-ական սէնտ. Ս. Մ., Խ. Բ., 8. Կ. եւ Գ. Թ. մի-մի ռ., Թ. Մ. Կ. 50 սէնտ:

ՌՈՒՄԵՆԻԱ. — Ս Ո Ւ Լ Լ Ի Ն Ա. Զ. Գ. -ի միջոցով Բանուորներից 200 ֆրանկ:

Գ ա լ ա ց քաղաքից Եղ. Ար. 40 ֆրանկ, Ընկերք Հայաս-տանցի, Եղ. Գոմ. եւ ՅԼ. Նտ. 20-ական ֆր., ՅԼ. Կես. 15 ֆր. Մ. Խ., Ա. 8., Կր. Սր., Եփ. Փ. 8., Կ. Ս. 3., Մ. Բն., Մ. Փր. եւ 30 Սր. 10-ական ֆր. Ըլնա Լնաչէտի, Յաւանտոտ եւ Գ. Թ. Թաթ 5-ական ֆր., Փ. Ա. 3 ֆր. 8ր. Թ. մ. 2 ֆրանկ:

ՐՕՂԳԱՐՆ. — Թ. Ս. Ն. քաղաքից 200 ֆրանկ.

ՄՈՒԼԻԱ. — Լճուտն Մ. Օ. մի պատերազմային շեռաղիտակ: Եղ. Զ. Զ. Ա. Մ. — Թ. Ն. է Վ քաղաքից Փ. Եց 5 ֆրանկ:

ԶԷՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ԿԵՐՁԻՆ ԼՈՒՐ.

*** 20 դեկտեմբեր 1895.

Յայտնի պ. Եպահի հրամանատարութեան տակ գտնվող Հնչակեան բանակը մեծ յաղթութիւն տարաւ Գրոշուղի դէմ Չուգուր-Հիսարէն, Մեր-սինէն և Ելաչէհիւրէն գոցող թապուրներուն վրայ: Թշնամեաց կորուստը խիստ շատ է. չարաչար յաղ-թուած բանակը ետ քաշուեցաւ և ինչպէս կերելի իր կորուստն տյնքան զգալի է որ յարձակողական

գիրքը թողելով պահպանողական գիրք բռնած է:
 Այսօրսամենի դէպի Ղրբուսի կոչուած կիրճն ա-
 սաջացող ձիււոր և հետեակ պաշխպօզուք զօր-
 քերը մեծ կոտորած ուտելով Շահէնի հրամա-
 նատարութեան տակ գանուող Հնչակեան բանակէն՝
 դէպի Այսօրսամենի Օվան նահանջեցին: Այս դէպ-
 քերի մանրամասնութիւնները դեռ չեն հասած:

**ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ
 Գ Է Պ Ք Ե Ր Ի .**

1895 ՀՈՎՏ. 27-ԷՆ ՄԻՆՉԵՒ 16 ՆՈՅ. 1895.

(Շարունակութիւն) *

ԱՋԱՏ ԶԵՅՅՈՒՆՆԻ ԶՕՐԱՆՈՑԷՆ.

Վաստորդ թղթակցութեամբս բաւական ընդար-
 ձակ գրեցի ձեզ Զէյթունի և իր շրջակայ հայ գիւ-
 ղերի սպասամբութեան մասին, չոկտ. 1-էն սկսելով
 մինչև չոկտ. 27: Այժմ սոյն թղթակցութեամբս կը
 շարունակեմ գրել իր մանրամասնութեամբ մինչև Նո-
 յեմբեր 16 տեղի ու եցած անցքերն ու կարգադրու-
 թիւնները:

Վերջին լրով իմացուցեր էի ձեզ թէ Եայիճ-Օլլին
 սպաննուած է. բայց ի վերջոյ ստուգելով իմացանք խըն-
 դրին խիստ թիւնը: Եայիճ-Օլլին պաշարած էր Շիվի-
 կիի հայաբնակ գիւղը, 600-ի մօտ մի մեծ սէյմէնով,
 կառավարութեան յատուկ հրամանագրով. — զայս ըս-
 տուող հրամանագիրը մեր ձեռքի մէջն է անցած այ-
 ժմ: Շիվիկիի քաջ հայերէն մի գունդ, իրեն պարա-
 գլուխ ունենալով «Աւօ» զօրագնդէն կարապետը, 10
 օր քաջարար կը դիմադրէ: Վերջին վճռական օրին
 թ. ափուտ հայաբնակ գիւղի կտրիճերէն օգնութեան
 կը հասնին 60-ի չափ քաջեր: Այդտեղ կուռող հայե-
 րը սիրտ առած դուրս կը գան իրենց ամրոցների ետե-
 ւէն և կը յարձակին սէյմէնի վրայ: Կարապետը կը
 զարնէ և կը վերաւորէ Եայիճ-Օլլին, որ ձիէն վար իյ-
 նալով կը սկսի փախչել, որի ետեւէ կը փախին իր մար-
 դիկը: Հայերէն սպաննուող չը կայ. իսկ թշնամիներէն
 9 չէրքէզ կը մեռնի և 6 հաս ալ կը վերաւորուին. թիւրք
 աշիրեթէն ալ 10-ի չափ մեռած են:

Կուռի վերջացած պահուն՝ Փրոնուլլի քաջերն ալ
 կը հասնին և իրենց գոռում գոչումովը մեծապէս կը
 նպաստեն թշնամիի շուտափոյթ փախուստին: Հայերը
 վազելով աւարի կրտան սպաննուած թուրքերի գոյ-
 քերն ու Սիսնէի թրքաբնակ մասը. թուրքերը ար-
 դէն փախեր էի:

Շոկտեմբեր 29-ին Նէտիլիցիները կատաղած կրկին
 յարձակեր էին Թէլէմէլքի վրայ. սորա վրայ բարկա-
 ցած՝ Ալապաշի Միւտիւր հուշակաւոր Խաչեր քէհեա
 կարապետեանը և Միխայէլ քէհեայի որդի Փա-
 նոս աղան իրենց 200-ի մօտ քաջերով, Զէյթունի
 կարկառար թաղի 30-ի մօտ քաջեր Տէր-Խաղարեան
 Աւետիքի աւաջորդութեամբ յարձակեցան և կոտորե-
 լով փախուցին Քիւրթիլի և Նէտիլի թուրքերը
 Զահանի գիւմացի եղբրքը, որտեղէն ամենքը դաղթեր
 և շնչասպառ ընկեր են Մարաշ:

Նոյեմբեր ամսի 1-ին Զէյթունի բոլոր քաջերը
 գիմեցին դէպ ի Պուլուսի և կապանի հայաբնակ
 գիւղերը՝ այնտեղի հայերի շտեմարանները պաշտպա-

նելու և թիւրք գիւղերն անձնատուր ընելու: Թուրքերը
 վախ ունէին որ Զէյթունցիները բորբոքած թիւրքերի
 կողմէ հայերուն տուած չարիքներէն՝ գուցէ կոտորեն
 անձնատուր եղած իրենց գիւղերը: Բայց Հնչակեան
 կուսակցութեան գործիչներէն պ. Հրաչեան գնաց
 կապան և առանց արիւն թափելու անձնատուր առաւ
 կապանի թիւրք գիւղը, որ ստորագրութեամբ յայտներ
 էր իր հպատակութիւնը մեզի, որով և մնացին Նոյն
 եղբայրութեան հոգածողութեան ներքեւ, ինչ որ հայերը:

Հայերը դեռ կապանի մէջ եղած լուր կը հասնի
 մերիններուն որ Անտարուսի գայմագամութեան մէջ
 եղած բոլոր հայ մեծերը կառավարութիւնը բանտարկեր
 է ախոսներու մէջ, կոյսերը առեւանգեր. բանտարկեր են
 Նոյն իսկ Սանտուգ-էմինի (Սեղանաւոր) Նազար
 էֆէտին և միւս հայ պաշտօնեաներն, ու բոլոր հայերի
 տները աւարի տուեր: Սոյն անիրաւութեան վրայ բարկա-
 ցած Ֆրոնուլլի հայերը, գրգռութեամբ և առաջորդու-
 թեամբ Բարդուղիմէոս վարդապետի, որ սկիզբէն
 մինչ վերջ մեծ քաջութեամբ և յանդգնութեամբ կը մի-
 ջնատէ ամեն կուռի, Պըլտըրեան Գէորգ աղայի, Զի-
 նիկէոզեան Պետրոս աղայի, Տնտեսեան Աւե-
 տիս աղայի, Ալաճեւսճեան Մանուկ աղայի, միա-
 ցած Թէքերի, Տաշուղի, Քիրէճի, Վրվիկիի, Թափուզի
 և Զէյթունի մի գունդ քաջերի հետ, ըրդամենը 350,
 կը քալեն Անտարուսի վրայ:

Անտարուսը Զէյթունէն 3 օրուայ ճանապարհ է,
 Զուգուր-Օվալի հիւսիսային եղբրքի վրայ: Կառավարու-
 թիւնը իր բոլոր ոստիկաններով, խճաներով, պաշխպօ-
 ղուքներով՝ կը կազմեն ճիշդ 950 հոգույ մի սէկմէն:
 Սորա կուղին նախապէս մորթել բանտարկուած 150
 հայերն, այր, կի, երեխայ և աղջիկ, որոնք Մարաշի,
 Հաճնցի, Տաշ-Օլլուղի գաղթականներ էին: Բայց իմա-
 ցած լինելով, որ հայերը Անտարուսի վրայ կը քալեն,
 թողած են այդ միտքը, ըսելով թէ «սորա մեր բան-
 տարկուած հաւերն են, նախ երթանք կոտորել եկուր
 կեամբուրներն և վերջը ասոնք... Թրքական սէկմէնին
 կառաջնորդէին գայմագամը, մալ-միւտիլին, դատաւորը,
 կապանի հուշակաւոր Տուրաու-բէկը, Հաճի էֆէնտին
 և Խուսուֆ չափուլը — Զէյթունի դահիճ ֆազլա գօլ
 աղասը կոչուածը:

Թուրքական բանակը պատասպարան շինած կը նստի
 Անտարուսէն մի ժամ վեր Աղղըտի բերդի ստորոտը,
 դաշտի վրայ:

Նոյեմբերի 3 ուրբաթ առաւօտն էր երբ կուրը
 տեղի ունեցաւ. հայերը արեւածագին դուրս եկան դաշ-
 տի վրայ: Թրքերի կողմէն տեղի ունեցաւ սոսկալի հրա-
 ցանաձգութիւնը կարկուտի նման: Բայց հայերն ան-
 վեհեր, խրոխտ և անշեղ կը յառաջանային թշնամի
 բանալի վրայ: Զարմանալի էր այդտեղ հայերի բռնած
 ուղղական ընթացքը. ձիաւորներն ուղղակի դաշտին
 մէջէն քշեցին թշնամիի ամրոցների վրայ: Գոցա մէջ
 նշանակելի քաջերն էին՝ Զէյթունի միջին թաղէն
 Զօլաքեան Փանոսը, Բող-Բայիրէն Պետրոս
 աղայի եղբայր Չաքրեան Փանոս աղա քաջ և ան-
 վեհեր երիտասարդը, վերի թաղէն ոստիկան Նշան
 Նորաշխարեանը: Զիւտորների ետեւէն անվեհեր
 ընթացան Տաշուղի և Քիրէճի ամեն հայերը: Իսկ մը-
 նացած զինուած հետեակները երկուսի բաժանուելով
 աջէն ու ձախէն պաշարեցին թշնամիի բանակը: Այն
 պահուն որ կողմնակի գնացող հայերը հասան թշնա-
 միի ամրոցների հաւասարութեան, հայերի կողմէն ըս-

*) Տես «Հնչակ» Nrs 23 և 24, 1895 թ. և Nr 1, 1896.

կաւ կատարի հրացանաձգութիւնը: Կոնք տեւց երկու ժամ, թշնամիի կողմէն զարնուելով 5 հոգի, աշիկա սկսաւ փակել: Այդ միջոցին հայերն ինկան փակուող թշնամիի ետեւէն և սկսան կոտորել: Զարմանալի քաջագործութիւններ կատարեցին Զալլատի եղբայր Կիրակոս Ղըր-Փանոսեանը և ասոր հօրեղբայր Թավուտը և Զալլատի քեռորդի Ղոճան, որոնք առանց աւարի նայելու կը սպանեն Տուրու-Բէկը, կը վերաւորեն շաճի-էֆէնտին, ուրիշ աստիկաններ և ուղղակի կը դիմեն կառավարական Պալատ՝ ճիշդ այն պահուն երբ փակուող ոստիկաններն եկեր էին և կուղէին վառել բանտարկեալ հայերը: Քաջերը սպաննելով այդ ոստիկաններն ևս, դուրս կը հանեն խեղճ հայ բանտարկեալ ընտանիքները, որոնք 12 օր անօթի ծարաւ հասեր էին մահուան, մինչդեռ դուրս եկան ազատ շուշ քաշելու և համբուրելու իրենց ազատարար եղբայրները: Սոցա օրինակելի անձնուիրութեան ու քաջագործութեանը հետեւեցան Թէսմէքէր Ասատուրը, մանաւանդ Զօլաքեան Փանոսը, որ միշտ ազգային զգացմամբ վառուած, կուռեցաւ ու վարուեցաւ ճշմարիտ հայրենասէրի նման: Զէյթունի մէջ թէպէտ սորա նման շատ յայտնի քաջեր կան, բայց քիչերն ունեցան ասոր բարձր զգացումները... Սպանեց Եռուստի չափուը և ուղղակի դիմեց բանտ, ուրկէ դուրս հանելով ողեսպառ հայ տիկիները, հեծցուց իր ձիերի վրայ և նոցա մանր երախաններն ու աղջիկները միայնգամայն շալկելով ու զրկելով՝ հասուց երկու օրուայ ճանապարհ գէպի Ֆրանսոզ:

(Շարունակութիւնը միւս շամարում) **ՏՕՐՈՍՅԻ.**

ԲԱՂԵՆԻ ՎԻՃԱԿԸ ԿՈՏՈՐԱՅԻՆ ՎԵՐՁ.

Բաղէշ, 27 Նոյեմբեր, 95.

ԱՏ ու սարսափ մեր շուրջ պատած ըլլալով՝ հասարակութիւնը կը գրեմ ներկայ նամակս: Օր նոր՝ դէպք հարիւր. սարսափ ամենուրեք. քաղաքիս և գիւղերու մէջ ամեն օր ցուրտէ և անօթութենէ կը մեռնին: Հոկտեմբեր 13-ի սև օրէն ի վեր երեսուցուն ինք օր կանցնի և լոյս մը չը կայ... Դէպքէն յետոյ բազմաթիւ երեւելիներ բանտը տրուեցան և սաստիկ տանջանքներով ահարեկելով շորհակալութեան հանրագիր կըքել տուին: Բանտարկեալ երեւելք ի սէր իրենց և քաղաքի մնացեալ ժողովուրդը փրկութեան խնդրեցին քաղաքիս առաջնորդական տեղապահէն կնքել հեռագիրը. այս հանգամանաց տակ այն ալ կնքած է. բայց ստուգապէս դիտելէ թէ պատրիարքարան բողոքած է և յայտարարած է որ բռնի կնքել տուած են իրեն այդ հեռագիրը որ ճշմարտութեան իսպառ հակառակ է, մինչ իրողութիւն այն է որ հոկ. 13-ի դէպքը թուրքերու կողմէ կանխամտածութեամբ տեղի ունեցաւ՝ յորում կանոնաւոր զօրքն և ոստիկանք իսլամ խուճանի հետ ջարդեցին 5-600 ա՛մեղ հայեր և աւերեցին ամեն ինչ, և այժմ ևս կառավարական պաշտօնեայք յատենի և հրապարակաւ կըսպանան մնացեալ հայերը իսպառ ջարդել և ջնջել, եթէ շորհակալեաց հանրագիրը չը ստորագրեն: Այդ առաջին հանրագրին ոտորագրուելէն քաջալերեալ մի քանի օր առաջ հետեւեալ հեռագիրն ևս ստորագրել տուին՝ միւսնոյն ճշման ներքև:

«600 տարիէ ի վեր երջանիկ կապրիք մեր իսլամ հայրենակցաց հետ. ուրիշներ շահագիտական նըպատակով զմեզ զրոյցեցին, մենք յարձակեցանք թուր-

քերու վրայ՝ ամեն յանցանք մերն է, անօթահար եղած ենք. ինչ պատիժ որ անօրինուի՝ արժանի ենք. օտարաց միջամտութիւն մերժելով՝ գոհ ենք տաճիկներէն և կայսերական ներման ու գլխութեան կապաւնիմք» ևն:

Յուսահատուած հայերը ծակ ու ծուկէ բերելով բռնի ստորագրել տուին. կը լսենք որ միւս գաւառներն ալ նոյն բանը ըրած են:

Սեր քաղաքի և շրջակայից յուսահատական վիճակի մէջ կը գտնուի նաև Սղեր դը: Նոյեմբերի 3-ին 70-ի չափ մարդիկ կը կոտորուին Սղերգի մէջ. ասոնք գրեթէ ամեն ալ հայ են. շուկայ, տուն եկեղեցի, առաջնորդական կը կողոպտուին, կին, աղջիկ կառուանգեն, քահանայ, դաստառ, առաջնորդի փոքրաւոր կըսպաննեն, տեղապահ Թէոթորոս վարդապետ Տիվրիկեանն ալ մահամերձ կը վերաւորեն և այս ամենը՝ սուկալի, ամենախիւրք արարուածներով:

Նոյնպէս Շիրվան գաղաթի Երուսն նահիէի բըրխտոնեայ գիւղերէն Սարուս՝ 30 տուն, Աւին՝ 20, Ավավ՝ 40, Հաբային՝ 20, Սէրմէթ՝ 20 և Տէրլէք՝ 6 տուն, բոլորը կը կոտորեն ու կաւերեն և բընակիչներէն մնացեալները բռնի մահատական կընեն եկեղեցիները մզկիթի վերածելով: Նաև Կնձիկ գիւղ՝ 50 տուն, Սիղակ՝ 30, Չուս՝ 20, Պուս՝ 10 և Մաղրա 6 տուն. այս գիւղերն ևս ամբողջովին կողոպտուած, ձեռք ինկածներ սպանուած, կին և աղջիկ առևանգուած, մնացեալք ալ բացօդեայ՝ ցրտէն և անօթութենէն մեռած:

Շիրվան գաղաթի հետեւեալ գիւղերն ալ՝ Մատէն՝ 40 տուն, Գուրեհնա՝ 30, Գուստէ-Հիլան՝ 30, Կիկան՝ 50, Մնար՝ 30 տուն ամբողջ կողոպտուած, շատ մարդիկ կենդանւոյն այրուած և սպանուած, աղջիկ և կին առևանգուած, շատերը ցիր ու ցան եղած և մնացեալք բռնի թըքացուցած:

Բաղէշէն 3 ժամ հեռու Կիւղէլ-Տէրէի Տալ-Տօփ, Խարթ-Տօփ, Սագ, Կարբնել և մէկ էամ հեռու՝ Չիկան և Անտեան գիւղերը կողոպտուած եկեղեցիներով և բնակչաց շատերը սպանուած:

Նոյնպէս Խիլանի բազմաթիւ գիւղեր կողոպտուած, բնակիչք սպանուած, կին և աղջիկ առևանգուած, ս. Խաչ, ս. Գամաղիէլ վանքերն աւերած և կողոպտուած, վանահայրը սպանուած և մնացեալք բռնի իսլամ ըրած են:

Ուրիշ լուրեր և մանրամասնութիւններ յաջորդ նամակաւ: **ԲԱՂԵՇԻ.**

Բաղէշ, 6 դեկտ. 1895.

Կանոնաւոր պաշարման վեճակի մէջ ենք. ոչ բաղէշէն մարդ կրնայ երթալ գիւղերն և ոչ ալ գիւղացիները կը համարձակին քաղաք գալ: Իւր տունէն դուրս ելնող հայն եթէ ջարդող խուճանին ձեռքէն սպրդելու լինի՝ կառավարութիւնը կը բռնէ կը տանի բանտարկելու. առևտուրը բոլորովին դադրած է, շուկայ, վաճառական, ապրանք, ստակ մնացած չէ. թէ քաղաքը և թէ շրջականեր սուրէն և հուրէն զերծ մնացած ժողովուրդը կապրի իբր կենդանի մեռեալ. ամեն մի ժամ աղէկուոր հոգեւարք մ'է որ կանցնի: Գիւղ և քաղաք երթեկելու յանդիմողները ոչ միայն կը ձերբակալուին և քաջալերով բանտ կը բերուին, այլ և գոյքերնին կը կողոպտուին. անգամ մը բանտ մտնելէն վերջ այլ ևս հաղար ու մէկ իսայտառակ զըրպարտութիւններ կը պատրաստեն՝ թշուառներու գլխուն

կուտակելու համար. մինչև իսկ այս շաբթու յատուկ ոստիկաններ խրկելով գիւղերէն Բաղէշցի հայերը հաւաքեցին բերին աստ բանտարկելու. ասոնց կարգէն է Միւսնի գիւղ անուն երիասարդը որ Ծ-Յ ամիսէ ի վեր Պոլսանըզ կը գտնուէր իւր վար ու ցանքի վրան: Երկու օրէ ի վեր խիստ հրամաններ տրուած է ձերբակալելու քաղաքիս ազգային երեսփոխանական ժողովոյ ատենադպիր Սարգիս Խարդազղևան անձն, որ կատարածէն դեռ 15 օր առաջ Հոգոսի արքայապետէն վերադարձած լինելով՝ կոտորածի պահուն իւր տունն ամբողջապէս աւարի անուած ու ինքն ալ 3 օր բանտարկուելէ վերջ ազատ թողուած էր և վերջերս Բաղէշոյ առաջնորդարանը գրադրութիւն կընէր. կերևայ թէ կառավարութիւնը կուզէ այդ առձեռագետ անձը մէջտեղէն վերցնել պարզապէս առաջնորդարանի գործերը դադարեցնելու համար: Քաղաքիս առաջնորդական տեղապահ Տէր Յակոբոս Մ. Հասպաղևան այս շաբթու հեռագիր մը ուղղեց սուլթանին, որով յայտնելով բանտարկեալներու աղիողորմ վիճակը, անոնց գոյքերուն թաղանթած, ազգական և զաւակներուն սպանուած և անոնց ը տակեաց անտէր երեսի վրայ մնացած լինելնին՝ կայսերական գթութիւնը կը հրաւիրէ գէթ այդ բանտարկեալաց վրայ. բայց այն դիմումն ալ չունեցաւ ու է արդիւնք (և ինչպէս կընար ունենալ, քանի որ սուլթանն ինք հրամայած է որ զմեզ բաժնիչ ընեն...): Այսպէս, ոչ միայն վերջ մը չը տրուիր գործուած ամենօրեայ վայրագութեանց, այլ և գոնէ այս թշուառ բանտարկեալներուն ալ թոյլ չը տրուիր որ կունեն երթան լան և կոծեն իրենց սիրելիներու գերեզմանի վրայ...

Տեղական կառավարութիւնն ի ցոյցս մարդկան կարօտելոց նպաստելու ձեռնարկ մը ըրաւ. այս անուամբ կազմուած յանձնաժողովին քանիցս առաջնորդարանի կողմէ կարօտելոց ցանկեր պատրաստուեցաւ, բայց բնաւ կարեւորութեան չը տրուեցաւ. կառավարութիւնը միմիայն այնպիսիներ կընտրէ օգնելու որոնց տալ բոլոր հարկաւոր անձերն սպաննուած են ու տան մէջ արժէքաւոր իրեղէն մը չէ մնացած. անդին խանութպան եր, արհեստաւորներ ու ազգատներ որոնց տուններէն թէ մարդ սպան ուած է, թէ խառնութ, գոյժիք ու տուն կողպատած են և թէ ամեն միջոցէ զրկուած են իրենց թըշուառ ընտանեաց չորաբեկ հաց մը ձարելու համար՝ ցանկէն դուրս կը մնան. այս կերպով միայն 400 անձանց ցանկ մը պատրաստած է կառավարութիւնը քաղաքիս կարօտեալներէն ու այն ալ դեռ ցանկ կը մնայ... Քաղաքս ու շրջակայ գիւղ ու գաւառներն միջին հաշուով 40,000-էն աւելի թշուառ քրիստոնեաներ ոգեպահիկ կտոր մը ցամաք հաց չը կընալով ձարել, մերկ ու սովեալ մեռնելու բնաջինջ լինելու վտանգի մէջ կը գտնուին:

Երկրի պահպանութեան համար ի զէն կոչուած ռէտիֆի գորաց սպաննալեաց ու կողպուտի մասին անցեալ նամակներովս խօսած եմ: Դիւրեմբեր 24-ի ուրբաթ օրը մալ մնաց որ ռէտիֆներն երկրորդ ու աւելի սարսափելի կոտորած մը պիտի ընէին քաղաքիս մէջ. այս շաբթու հասած նորագոյն տեղեկութիւններէն կիմանալք որ տեղափոխուող ռէտիֆներն անլուր չարիք ու կողպուտ կը գործեն ամեն հանգիստ տեղ:

Կառավարութիւնն կուսակալութեան շատ մը կողմերն անողորմ հարկահաւաքներ ցրուած է, որոնք այս անգամ չը գտնալով ժողովոյի քով ստակ, ապրանք

կամ անասուն, ի հարկէ առատաղն դերաններն քանդելով պիտի տանին վաճառել տան:

Տեղական կառավարութիւնը կողպուտները ետ առնելու մասին ի ցոյցս մարդկան ձեռնարկ մ'ալ ըրած է. գիւղերի ոստիկաններ ու բարբարոս քիւրտեր գրած է պաշտպանութեան համար (). ասոնք միայն գիւղացիները չարչարելու ու խոշտանգելու կը ծառայեն և ոչ այլ ինչի. անթի գիւղացին ստիպուած է թողուլ որ իւր զաւակներն առաջ կտոր մը չոր հացի շարաշար մեռնին, իսկ այդ պաշտպաններուն համարամ կերակուրներ պատրաստելու համար գոնէ գուռ դեգերել: Կողպուտէն ոչխար, անկողին կամ չափ մը ցորեն եթէ ետ անուել, այն գիշեր վայ եկած է գիւղացոց գլխուն. գիւղը բարբարոսներէ կը պաշարուի և ետ աննուած կողպուտի տասնապատիկը նորէն կը յափըշտակուի սպանութիւններով հանդերձ, և այս ամենը կը կատարուի կառավարութեան կողմէ գիւղի մէջ գրուած պաշտպաններու աչքին առաջ: Այս մասին մի օրինակ բաւական է. քաղաքէս երկու ժամ հեռու Կորվու հայաբնակ գիւղն առաջին անգամ 12 մարդ սպաննուած, 22 տուն հրդեհուած և ամբողջ գոյքն աւարի անուելէ վերջ՝ մնացած ժողովուրդն ցիր ու ցան եղած էր: Կառավարութիւնը պաշտօնետներ զրկելով՝ ցրուած ժողովուրդը բերաւ դարձեալ գիւղը բնակեցուց և քանի մը չափ ցորեն ու քանի մը ոչխար աւարէն ետ դարձնելով իրենց տուաւ, երկու ոստիկան ալ գիւղին մէջ պահպան դնելով: Ամսոյս 2-ին թուրք և քուրտ խուժանը գիշերանց պաշարելով նոյն գիւղը, երեւելիներէն երկու անձ սպաննեց և ետ դարձուած աւարի վրայ բարդելով գիւղին մէջ մնացած ամեն ինչ՝ առաւ քաղց. ոստիկանները լուռ կեցան... Երկրորդ օրն քաղաքիս առաջնորդական տեղապահն այդ սպանուողներու արիւննտ հանդերձներն գիւղացուց հետ փոխ-կուսակալին տանելով անձամբ բողբեց. արդիւնքն — զրօ: Քաղաքիս կից ամեն գիւղերն այս վիճակին մէջն են, երեւակայեցեք թէ աւելի հեռու գիւղերն ինչեր կը գործուին... ու այս զարհուրելի վիճակն բաղդատեցեք լըրագիրներու մէջ պաշտօնապէս հրատարակուած շորհակալութեան հեռագիրներու և սպահովութեան վերահաստատման մասին անխղճօրէն գրուած լուրերու հետ:

Եւրոսն, Շիրվան և Խիզան գաւառներու կորստեան մասին նախորդ նամակովս գրած եմ: Շաբթուս էրուն գաւառէն երկու բաթաբերներ ձողպուտով Բաղէշ հասան. Սիդուք գիւղի քահանայ Տէր Պետրոս Տէր Պետրոսեան և Ռէս Սարգիս Մարտիրոսեան. պահ մ'ալ լսեցեք անոնց սրտամորմոք նկարագրութիւնը.

«Հոկտեմբեր 13-էն սկսեալ շէյխերու հրամանատարութեամբ բարբարոս քիւրտեր պարբերաբար յարձակեցան հայ և ասորի գիւղերու վրայ. ամեն գիւղի մէջ աչքի զարնող անձերը չարաշար սպաննելէ կամ կենդանւոյն այրելէ վերջ, գիւղն ամբողջապէս կը կողպուտէին, ուտելիքէ սկսեալ մինչև անասուն և մինչև հագուստ. եկեղեցիներն արդէն առաջին անգամ կը կողպուտուէին. անկէ վերջ մնացորդ ժողովուրդ մահու ըսպաննալքով մահմետականութեան կը հրաւիրէին. ընդհանրօրէն նորէն սրտխողխող ընելէն զինի, մնացողներու համար մահմետական կրօնքի ձեւակերպութիւնները կը կատարէին, և անմիջապէս կը թրփատէին. քահանաներու գլուխ ձերմակ փաթթոցներ կը տրուին. քահանաներու կիները մօլաներու կամ այլ մահմետականներու

րու կիններու հետ կը փոխանակեն, մէկ երկու քուրտ կիններ ալ աւելի կը տրուէին քահանաներուն, որպէս զի խառնակութիւնը կատարեալ լինելով, մահամետականացումն առ երեւոյթ բան մը չը մնար: Ո՛ր տան մէջ քանի մը եղբայր կար, անոնցմէ մէկ երկուքն սպաննելով՝ սպաննալներու կիններն ողջ մնացող եղբարց կը բաժնէին, հրամայելով թէ՛ «մահամետական կրօնքի սրամագրութիւնն է որ պէտք է ձեր եղբարց կիններն ալ ձեզ իբրև ամուսին ընդունիք»: Եկեղեցիներն ամիջպէս քանդելով և դէպի հարաւ աղօթարան շտկելով մղկեթի կը փոխարկէին»:

Այս ամեն կը շարունակուի եղեր մինչև նոյ 20-22-ին երբ ընունէ լեռ փախչելով այդ քահանայն ու ուսըն այդ գաւառներէն կը ճողոպրին կեղնեն: Երուն նահիէի 12 գիւղերն, Շիրվան գաւառի 20-էն աւելի գիւղերն և Խիղան գաւառի 20-էն աւելի գիւղերն իրենց քահանաներով, ժողովրդով, վանքերով ու եկեղեցիներով աւերողընին այս վայրագութեանց ու ճնշման ենթակայ եղած են: Աւերջին ուս և թրքական պատերազմի ատեն Պայազիտի և Ալաշկերտի հայոց կոտորածով նշանաւոր Շէյխ Զէլալէտտինի որդին Սէյտ Ալին այժմ ընտանեօք կը բնակի Խիղանու հոգեւոր ս. Գամազիէի վանքին մէջ և միւս բոլոր վանքերն ալ այդ օրինակ շէյխերու կալուածներ դարձած են՝ իրենց եկեղեցական անօթներով, սպաններով ու մասունքներով ի միասին:

Այդ փախստական Տէր Պետրոս քահանան որ 45 հոգիէ բաղկացած նահապետական մեծ ընտանիք մը ունի եղեր՝ հրաշքով յաջողած է անոնցմէ 22 հոգին ազատելով իւր հետ փախցունել, որոնք սակայն այս կողմեր անօթութենէ մեռնելու վտանգի մէջ են այժմ՝ հակառակ իրենց ունեցած 400 կթան ոչխարին, 250 մեղրի փեթակին և այլ մեծափարթամ հարստութեանց որոնցմէ ամբողջապէս զրկուած են: Այդ դժբաղդ քահանայն այս նողկալի անցքերը պատմած ատեն յորդ արտասուք կիջնէին նուազած աչքերէն և փղձկելով իր խօսքերը կը խեղդուէին: Մենք ալ լացինք այդ քահանային հետ և ցարդ ի սրտէ հառաչելով կողբանք թշուառ հայերու այս բարբարոսական կորստի վրայ, աւելի ասոր համար որ այդ բարբարոսութիւնները ցարդ կը շարունակուին նահանգիս ամեն կողմ և նոյն իսկ քաղաքիս մէջ, ուր այս մէկ շարթուան մէջ 10-էն աւելի հայ մարդ, կին և երախայ մահամետականութիւն ընդունելու ստիպուեցան:

ԲԱՂԷՇՅԻ.

ՆԱԳԱՐԷԹ ԼՈՒՍԻԿԱՆՆԵՐ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

Նաղարէթը ծնած է Սեբաստիոյ մէջ 1868 յունիս 30-ին: Իւր հայրը կարապետ Լուսիկեան՝ համետագործ էր և միջին դասակարգի կը պատկանէր:

Նաղարէթ շատ քիչ ժամանակ յաճախած էր վարժարան, որով միմիայն հասարակ ընթերցանութիւնն ու գրել սովորած էր: Իւր պատանեկութեան հասակին մեծ մասն անցուցած է տաճիկ տղայոց հետ վէճեր ու կռիւներ ունենալով:

Երբ չափահաս եղաւ Նաղարէթ՝ հաճառակ իւր ծնողաց թախանձանաց՝ մեկնեցաւ դէպի Վ. Պոլիս թէ իւր ապրուստը հայթայթելու և թէ թուրքաց ի գործ

գրած անտանելի կեղեքումներէ ազատ մնալու համար: Վ. Պոլսոյ մէջ կիսնայ Հնչակեան շրջանին մէջ: Բնա բաւականին շփուելով Հնչակեաններու հետ միևնոյն մտածուններն կսկսին զինքն ալ տանջել, որով իր մէջ կը ծնի հայ ժողովրդի փրկութեան նուիրական գործի՝ մասնակցելու գաղափարը: Այդ օրէն նա կը վճռէ ամեն ինչ զոհել՝ հանգստութիւն, գրամ՝ ու մի՛չև կսկ կեանքը՝ իւր սիրած գաղափարի իրագործման համար: Ինչպէս կը տեսնուի իւր կենսագրութեան յետագայ մասերէն՝ Նաղարէթ զիտցած է գործադրել այդ վճիռն այնպիսի զոհողութիւններու գնով, որոնք պիտի ծառայեն ընդմիշտ վառ պահելու իւր յիշատակը զինք ճանցողներու սրտին մէջ: Զը մտնանք ըսել որ Նաղարէթի իմացական կարողութեան մակարդակը բաւական բարձրացաւ շնորհիւ այն զարգացեալ ու լուրջ անձերու, որոնց հետ նա մշտական յարաբերութեան մէջ կը գտնուէր:

Ղիհանկիւլեան գտնելով այս երիտասարդին մէջ այնպիսի բարեմասնութիւններ ու յատկութիւններ, որոնք յեղափոխականի մը բարոյական ոյժը կը կազմեն, անդամ կը գրէ վայն իր նորակազմ՝ խուժբին, բան մը որ Նաղարէթին ետանգը կրկնապատկելու կը ծառայէ: Նա անմիջապէս կը ձեռնարկէ նորանոր խուժբեր կազմելու, որոնք իրեն նման անձնուրաց ու ազնիւ երիտասարդներէ կը բաղկանային: Նաղարէթ կանոնաւորապէս կը հրահանգէր իւր տրամադրութեան ներքև գրանուած խուժբերը և անոնց յեղափոխական քարոզներ կը կարդար: Իւր խուժբերու անդամներէն անդադար գանգատներ կը լսէր թէ ինչո՞ւ շարժում մը չեն կազմակերպեր Պոլսոյ մէջ: Բոլորն ալ անպուսպ փափագ մը ունէին կուռոյ դաշտն իջնել ու ցոյց տալ թէ հայն ալ գիտէ ի պահանջել հարկին զինու զրուժեամբ պաշտպանել իւր իրաւունքները:

Գուժ-Գափուի ԳՈ-ի Հնչակեան առաջին Յոյցը վերջնականապէս որոշուած ու կազմակերպուած էր: Յուլիս 15-ին Նաղարէթ իւր զինեալ խուժբերով կը հասնի Մայր-Եկեղեցի նոյն օրուան շարժման մաս՝ ակցելու համար: Նաղարէթ ուրիշ մի քանի հերոսներու հետ, առաջնակարգ ու նշանաւոր դեր կը կատարէ Յոյցին մէջ: Ի միջի այլոց կը սպաննէ Զափուշ մը, տասնապետ մը ու զինուոր մը: Աւերջապէս ձերբակալուելով ոստիկանութեան դուռը կը տարուի, ուր բաւական կը շարժարեն զինք: Զարցաբնուութեան միջոցին բաւական յանդուգն ու համարձակ պատասխաններ կուտայ: Գատարանը կը դատապարտէ զինք 15 տարուան բերդարգելութեան Միտիլիի մէջ:

Բանտին մէջ ալ Նաղարէթ հանդարտ չը մնար: Միշտ կը քաջալերէ ու կը խրատուէ իւր հայ ընկերներն և թիւրք բանտարկեալներուն հետ օրի ի բուն կը վիճաբանի: Իւր մեծերուն սիրաբ շահելով՝ կը յաջողէ հեռաւոր տեղեր գտնուող իւր ընկերներուն հետ յարաբերութեան ներ հաստատել: Այսու ամենայնիւ բանտի միօրինակ կեանքն անտանելի կը դառնայ իրեն համար, ուստի կըսկսի խորհիլ այն միջոցներուն վրայ, որոնց շնորհիւ պիտի կրնար ինքզինքն այդ դժոխքէն ազատել: Ամեն օր նոր-նոր ծրագրեր կը յղանար, սակայն շատ շուտ կը նշմարէր որ ատոնք բոլորն ալ անկարելիութեան սահմանէ դուրս չէին ելեր: Այս մը տածուժը զինք այնքան կը յուզէր, որ օր մը համարձակեցաւ իւր այդ դիտաւորութիւնը յայտնել տեղւոյն մի քանի օտար ազգեցիկ անձանց: Ի սկզբան ատրք ընդդիմացան. սակայն վերջը՝ Նաղարէթի յաճախակի խնդ-

րանաց վրայ կը խոստանան նաևով մը զինք փախցունելու միջոց մը գտնել, եթէ յաջողի բանտէն ելլել: Այս խոստման վրայ Նազարէթ կը քաջայերուել և վերստին իւր յոյսերը կարծեսնան, այնպէս որ վերջապէս կորոշէ յանդուգն փո՛ւձ մը ընել, որմէ կախում ունէր իւր ազատութեան կամ վերջնական կորստեան սարսափելի խնդիրը:

Անձրևոտ գիշեր մը, երբ բանտին բոլոր պահապաններն օդին սաստկութենէն պատսպարուելու համար բերենց խրճիթները առանձնացած էին և բնաւ ուշադրութիւն չէին դարձներ բանտին վրայ, Նազարէթ՝ հետըն առնելով իւր մի հայ և մի յոյն ընկերները, գաղտագողի, ոլոր մոլոր ճանապարհներով կը փախի բանտէն հեռանալ: Արեւն ալ ահագին դժուարութիւններ կը կրեն պարիսպներէն անցնելու համար, սակայն վերջապէս կը յաջողին: Միայն կը մնար իրենց նաւով մը օտար երկիր անցնիլ: Առաւօտուն բանտապահները իմանալով Նազարէթին և իւր երկու ընկերներու փախուստը, ամիջապէս ամեն կողմ հեռագիրներ կուտան ու ամբողջ Միտիոյն տակն ու վրայ կընեն: Տեղւոյն բոլոր հայոց սուները և ծովու վրայ գտնուող շոգենաւերը մանրազնին կերպով կը խուզարկեն, բայց հարկաւ ապարդիւն: Նազարէթ և իր երկու ընկերները տեղւոյն հայ պանդուխտներուն շնորհիւ այնպիսի տեղ մը կը պահուին, ուր կառավարութիւնը՝ հակառակ իր ըրած խուզարկութեանց՝ չը կրնար գտնել զանոնք: Վերջիջեալ յայտնի անձերը հակառակ իրենց խոստման չեն փախցունել վախնալով որ մի դուցէ խնդիրը երևան գալով իրենց որ և է վնաս մը հասնի: Ուստի Նազարէթ և իւր ընկերները կը ստիպուին 25 օր պահուած տեղերնին մնալ: Բարեբաղդաբար կը յաջողին Շիրակ գողին հասնիլ և անկէց Աթէնք, ուր կը հանդիպի իւր մի քանի Հնչակեան հին ընկերներուն:

ՆԱԶԱՐԷԹԻ ՄԱՆՔ:

95-Հոկտեմբեր ամսին յատուկ կարգադրութեամբ Հնչակեան մէկ ասպատակային խմբի հետ Նազարէթը անցաւ սահմանը գնալու Վան: Հոկտ. 26-էր, երբ հասան Մասիսի գաւառի Աղարէն գիւղը: Այստեղից գիշերով պիտի մեկնէին, սակայն Աղարէնի և Բողազ-Քէասանի մի քանի գիւղացիներ թախանձանօր ինդրեցին մի քանի օր խմբով մնալ այդտեղ: «Որ չը մնաք, ասում էին նրանք, մօտ օրերուս քիւրդերը պիտի յարձակվեն մեզ վրայ»: Այդ լսելով, Նազարէթը յանձն առաւ գնալ Բողազ-Քէասան կազմակերպութիւն մտցնելու, հրացաններ կարգի բերելու և շրջակայքը ուսումնասիրելու ռազմագիտական տեսակետից: Նա իր հետ առաւ Տ.ին և Աղարէն գիւղացի Ստեփան անուն մէկ ուրիշ անձի: Նազարէթը ձի է նստում և իր երկու ընկերներով մեկնում է գէպի Բողազ-Քէասան: Երեկոյեան ժամը հինգն էր. նա խոստանում է 2-3 ժամից վերադառնալ: Աղարէնից Բողազ-Քէասան երեք քառորդ ժամ է: Հասնելով Բողազ-Քէասան գիւղի առջև Ստեփանն այդ երկուսին թողնում է, իսկ ինքը գրնում գիւղը տեղ պատրաստելու: Երկու ընկերներին ճանապարհին յանկարծ հանդիպում են 15 զապթիաներ, որոնք տեսնելով զրանց զէնքերը, պահանջում են անձնատուր լինել: Երկու ընկերներն իբրև պատասխան հրացան են արձակում: Գնդակները սխուժում են կարկտի պէս թափվել: Հրացանի ձայնից դուրս են ելնում նաև 30 զապթիաներ, որոնք այդ միջոցին Բողազ-Քէասան գիւղն էին եկած զէնք խուզարկելու նպատակով:

Ժամը 6-էր: Գնդակների ձայնից օդը թնդում էր: Այդ ժամանակ Աղարէնում մնացած խումբը գուշակում է, որ իրանց ընկերներին դժբաղդութիւն է պատահել: Նրանք դուրս են գալիս ամբողջ խմբով և անցնում գէպի Բողազ-Քէասան: Մի մղոն դեռ չանցած գնդակների ձայնը յանկարծ դադարում է: Գիւղի դիմացի բլուրը բարձրանալով, երկու մարդ են ուղարկում գիւղ լուր բերելու, որոնք դառնալով պատմում են, թէ Նազարէթը սպանված է, իսկ Տ.ը վերաւորված: Զապթիաներից վերաւորվում են երկուսը, մէկի վերքը մահացու, որ և մեռնում է Ղանում: Անգութները Նազարէթի անշնչացած դիակի վրայ տեղացրնում են անթիւ գնդակներ և հրացանի հարուածներ: Կատարելով իրանց վերջնական բարբարոսութիւնները այդ նահատակի վրայ, բերում են գիւղը, միւս օրը փոխադրում են քաղաք և յանձնում Ղանայ առաջնորդարանին, որը և այդ ազգային քաջ նահատակի մարմինը հանդիսաւոր թաղումով ամփոփում է Հայկավանդ կոչված գերեզմանատան հողում՝ խուռն բաղմութեան ներկայութեան:

Ինչպէս զապթիաներն իրանք պատմում են, երկուսն էլ քաջաբար կուռում էին. Նազարէթը չորս գնդակ ընդունած դեռ շարունակում էր մաքառել. իսկ երբ զապթիաները մօտենում են մահամերձ վերաւորին, վերջինս մերկացնում է իր փոքրիկ դաշոյնը, բայց արգէն ուշ էր... Տ.ը իր սրունքից թէև երկու գնդակով զարնրված՝ յաջողում է փախչել և զապթիաները որքան էլ հետապնդում են նրան, բայց անհնար է լինում ձեռք անցնել: Նրա վերջերն այժմ լաւանարու վրայ են և քիչ քիչ կարող կը լինի նորից նախկին ժողովրդային սիրած գործին:

Փառաւոր են Նազարէթի պէս անձնուրաց ու անվեհեր նահատակների անունները, ինչպէս և արգիւնաւոր են այն սերմերը, որ նրանք ցանկցին ժողովրդային խաւերում և ցօղեցին իրանց սուրբ արիւնով:

Ս Պ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Փ Ո Ր Ա
Ը. ԱՐՓԻԱՐԵԱՆԻ ՎՐԵՑ.

«Հայրենիք» 27 Դեկտ. 95. Թ. համարում կարդում ենք հետեւեալը. —

«Երկուշաբթի երեկուն, ժամը 2-ին մօտ, Արփիար էֆէնտի Արփիարեան «Հայրենիք» խմբագրատնէս մեկնելով իր սուրբ կերթար Բանակաթի, երբ Թաքսիմի Զօրանցիին սողնին հասնելուն, մարդ մը, որ ետևէն կուգար, մէկ ձեռքը Արփիար էֆէնտիի ուսին վրայ կը դնէ և միևտուր դաշոյն մը կուղղէ անոր կուրծքին: Արփիարեան էֆէնտիի ետ դանակով կը փորձէ իրազեկած ոճրագործին ձեռքէն ազատել. այդ միջոցին երեք հարուած կըստանայ մինչ իր նովանոցը անոր գլխուն կը զարնէր:

«Այս մարտնչումը կատարուած աստիճանից, դիմացէս զիսուրներ կը հասնին, եւ Արփիար էֆէնտի «Բան մը չի կայ» ոտով կուղիւրի շիտակ իր տունը, եսկ ոճրագործը դէպի Թաքսիմ վազելով անտրեւոյթ կըլայ:

«Հարուածին երկուքը սրտին ուղղուած էին, բայց վրակում բազուկին վերի կողմն հանդիպելու են, իսկ երրորդը տրուած է աջ ձեռքի տակը: Իր բազմաթիւ բարկկամները ուրախութեամբ պիտի լսեն թէ կեսմարդ վտանգէ բոլորովն գնորդ է: Յոյս ունենք թէ վերքերը մէկ քանի օրէն կապարանին:

«Այս մարտապանական փորձին շարժանիքը մեզի զաղտնի կը մնայ: Իրաւ է թէ, վերջերս ստացանք նամակներ, որոնցով ճիւղերում էինք, մահուան սպաննալիքի ներքեւ, ալ ես չը հրատարակիլ Պաշտօնական Ձեկուցումները, բայց որովհետև Արփիար էֆէնտի «Հայրենիք» մէջ խմբագիր մնն է միայն եւ տարածելիս ալ բոլորովն անտեղեակ խմբագիր, որովհետև միւս կողմէ ալ այդ զեկուցումները թիւք թերթերու մէջ տպուելէ, այդ թերթերու մէջ թարգմանուելէ ետքը, 24 ժամ յետոյ «Հայրենիք» մէջ կը հրատարակուին լոկ անոր արտօնատուր եւ տընօրէնին պնտասիսանտուութեան տակ, տեղի կայ գործին այս հանգամանքներէն հետեւցնել թէ նոյն այս մարդիկը որոնք, մեզի անձամօթ շահերուն մէջ, իրենք զերեքը վնասուած նկատելով «Հայրենիք» գոյութեամբ, ասկէ առաջ մեծ խորհրդաւորութեամբ տնէ տուն, խանէ խան անգիտակից պատանիներ պտտողցին Արփիար էֆէնտիին վրայ սուկակի զրպարտութիւններ քննելով

և «Հայրենիք մի կարողացա՞ւ պատուիրելով, այս անգամ ալ մէկ քա-
նով քանի մը նպատակ մէկանց իրագործելու փութաբար, յա-
ջողեր էին խելո՞ մարդու մը ձեռքը գէտ մը դնել իրեն կար-
ծեցնել տարով թէ «օգուակար ո՞նիս մը գործած պիտի ըլլայ Ար-
փիարեան էֆէնտին մտնելով»:
«Երկուշաբթի գեշեր, Տր. Մախոխեան, Զօրասալ եւ Էլմաս-
եան վերադարձին վերջերս կապեցին եւ երէկ առաւու շիջու-
նը գտնու լաւ փորձակ մէջ»:
«Ամեն կողմէ բարեկամներ տունը կը փութան, որոնց ա-
ռաջներէն մին հոլաւ Բերայի բարոյիչ Տ. Ներսէս վրդ. Խա-
րահանանաւը»:

Մենք ամբողջովին առաջ բերինք այստեղ այդ
գեղարդը և հայ յեղափոխական ասպարէզում մինչև
օրս նմանը չեղած դէպքի նկարագրութիւնը, արտատը-
պելով դա «Հայրենիքից»: Վ. Պօլսից մեզ հասած յա-
ջորդական տեղեկութիւններից ապացուցվում է, որ այդ
զգուշի սպանութեան փորձը գործադրվել է «Հայ
Յեղափ. Կաշակցութիւն» անուն կողմ խմբի կողմից:
Այդ քայլը խտտապէս դատապարտելի է ամեն տեսա-
կէտից: Պ. Արփիար Արփիարեանը հայ հասարակու-
թեան մէջ յայտնի անձնաւորութիւն է: Նրա հասարա-
կական գործունէութիւնը և նրա գիրքը մեր գրակա-
նութեան ու մամուլի մէջ աչքի են ընկնում և երբէք
այնպէս չեն կոչել, որ անմեղութեան կերպով իսկ Ար-
փիարեանն արժանացած լինէր ինքն իրան յեղափոխա-
կան կոչող մի խմբակի անգործ գաշտի հարուածին:
Իր այդ քայլով այդ խմբակի իրան կատարելապէս ան-
արժան գարձրեց յեղափոխական ազիւ անուն, որը
գործածելու համար ո՛չ մի բարոյական իրաւունք չու-
նի, քանի որ ցածացաւ մինչև մի պարզ ոճրագործի
աստիճանը: Այդպիսի մի ստոր քայլ կը սպանէ ո՛չ
թէ այն անձին, որի դէմ ուղղված է գաշտը, այլ
այն խմբակին, որ եղբայրասպան ձեռքով գործում է այդ
անարժան գարձրը: Մենք ձեռք ձեռք ձեռք ձեռք համար
Իսկ թէ կարողութիւն չունէք այն խրելու թշնամու
կողմ, այն ժամանակ կտրեցէք այդ գէնքը, որ աւե-
լի լաւ կը լինէր թէ մնար ժանկոտած: Ամօթ զգա-
ցէք ձեր այն կայէնական արարքից, որ եղբայրասպա-
նութեան ոճրի կնիքն է անջնջելի կերպով գրոշմում
ձեր սևախորհուրդ ճակատին:

Յ. Գ. Մարտիրոս լոյս տեսնող փալատ թերթը,
որ «Արմէնիա» է կոչվում, իր վերջին թվերից մեկում
շտապում է Հնչակեաններին վերագրել վերոյիշած ըս-
պանութեան փորձը: Մենք հրաւիրում ենք այդ թեր-
թին իր մտաւայ համարներից մեկում բացարձակա-
պէս հերքել այդ ստոր զրպարտութիւնը: Հակառակ
դէպքում այդ թերթի խմբագրութեանը նկատում ենք
պատասխանատու:

ՀԱՅ «ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ» ԹԵՐԹԵՐԻ ՀԱՍՅԵԻՆ.

Վէհ, մէկ տեսնելը, ո՞վ մեր երգվեալ չարակամ-
նէր. ինչ է պատահել. ինչ էք ազմուկ համել. հօ
ուրուկանների աշխարհում չէք, ինչն են պետք
ձեր այդ բոյր աչքակապութիւնները: Բայց մենք հաս-
կանում ենք այդ կեղծոցները, որ Զէյթունի հրաշա-
լի ապստամբութեան առիթով դուք բարձրացրել էք
Հնչակեան կուսակցութեան դէմ: Ճիշդ է, որ ձեր
այդ ազմիկ նպատակն է հայ հասարակութեան կարծի-
քը մոլորել ու շեղել, և ձեր ի՛նչ փայթը թէ զրա-
նից Զէյթունի գործը փնասվէ, բաւական է որ դուք
կը ջանաք յագեցնել ձեր ռիւր Հնչակեանների դէմ:
Սակայն հաւատացէք, որ ձեր ազմուկով դուք միայն
ձեզ էք խաբում ու հաւատացնում, որ Հնչակեան-
ները իբր ո՛չ մի կապ չունեն Զէյթունի ապստա-

մբութեան հետ: Այդ միայն ձեզ համար հարկաւ ա-
ւելի քաղցր է, թէ քաջ գիտէք, որ ձեր ասածը
սուտ է: Սկսած թիւրք կառավարութիւնից ամբողջ աշ-
խարհ գիտէ, որ Զէյթունի ապստամբութիւնը նախա-
ձեռնվել, կազմակերպվել ու նախագծվել է Հնչակեան
կուսակցութեան ձեռքով և միմայն յրա յիւթական
միջոցներով. որ հէնց այն րոպէին, երբ դուք կոկոսում
էք մեր դէմ, Զէյթունի Հնչակեան գնդերը Հնչակ-
եան Ապահաների, Մէլիհաների, Հրաշխաների և այլ
բազմաթիւ առաքելային առաջնորդութեան ներքոյ
հերոսական յաղթանակներ են տանում... Գուք էլ գի-
տէք այդ, ինչպէս անմօնքը, բայց ցուր նրանումն է,
որ ճշմարտութիւնը խտտութեանն ունի սովոր էք և ո՛չ
սիրող: Դա ձեր բարոյական ոյժից շատ վեր է: Ի հար-
կէ թէ այդ խտտութեանն անէք, չէ՞ որ յոյն իսկ
ձեր լնթերցողների աչքին շատ թզուկ ու աննշան կե-
րևաք Հնչակեան կուսակցութեան դիմաց: Սակայն որ-
քան էլ դա հակառակ լինի ձեր մեծամտութեան, իրա-
կանութիւն է այդ և դրա հետ պետք է հաշտվէք, ե-
թէ չէք ուզում բողբոջել ծիծաղելի դառնայ... Ան-
կեղծ կերպով խորհուրդ ենք տալիս ձեզ մտածել զը-
րա վրայ. մերք ձեր բարին ենք ուզում, որովհետև
իմացէք, որ թէ վաղը որ և է գեղարդ պատահարով
Զէյթունը յաղթվեց, այն ժամանակ տեսէք, թէ այդ
առիթով որքան ազատ ասպարէզ կը բացվէ ձեզ հա-
մար հայհոյելու Հնչակեաններին: Բայց այդ անել կա-
րողանալու համար պետք է այժմից խտտութեանվէք, որ
Զէյթունի ապստամբութիւնը Հնչակեանների գործն է...
Ա՛խ, ծագրածուններ... Բայց թէ սիրում էք ծիծաղելի
կոկոնցները և անուղիչի կերպով ուզում էք յա՛մ
բիւ մնալ ձեր այդ բնական գերին, — որը վերջ է վեր-
ջոյ, յիրաւի, այնքան սաղ է գալիս ձեզ, — այն ժա-
մանակ առողջ կոկորդ ենք մաղթում ձեզ, որպէսզի
շարունակէք կոկոսալ մեր դէմ... Կանխապէս ձեզ ե-
րաշխատորում ենք, որ այդ բանը մեզ բողբոջին չե վեր-
գրվի և անուշադիր կը մնայ մեր կողմից... Գուք հա-
մարձակ կերպով շարունակեցէք ձեր այդ գործը...
Զէ՞ որ ուրիշ գործ չունէք արդէ... Իսկ մերք... մենք
էլ կը շարունակենք մեր գործը. Հնչակեան և Յեղա-
փոխութեան զրօշակն արդէն պարզած ազատ Զէյթու-
նի գապութիւն մեր կը շարունակենք կուսել ու նորա-
նոր յաղթութիւններ տանել յանուն հայութեան ա-
զատութեան...

Իւրի աջողութիւն թէ մեզ և թէ... ձեզ:

ՅԵՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Չանուպան երկրների հայ գաղթականութիւն-
ների մէջ առաջացած լինելով թիւրքիմացութիւն-
ներ, սրանով շտապում ենք յայտարարել, որ
Հնչակեան կուսակցութիւնն Պարիզում գոյութիւն
ունեցող հայկական այլ և այլ ընկերութիւնների
կամ խմբերի հետ ո՛չ մի ներքին կապ չունի:

Յօդուածներ, թղթատուութիւններ, տեղեկութիւններ
և դրամ ու մանգատ ուղարկել հետևեալ հասցեով.—
M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush.
London W. [Angleterre].